ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 29 >> հուլիսի 2013թվականի N 75 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի <<Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռ կազմելու կարգը հաստատելու մասին>> N 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետին համապատասխան՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի կողմից 2013 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված հողային հաշվեկշռին, ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և սեփականության սուբյեկտների.
1. Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 413.58 (չորս հարյուր տասներեք ամբողջ հիսունութ հարյուրերորդական) հեկտար, որից վարելահող՝ 88.43(ութսունութ ամբողջ քառասուներեք հարյուրերորդական) հեկտար, արոտ՝ 323.87(երեք հարյուր քսաներեք ամբողջ ութսունյոթ հարյուրերորդական)հեկտար,
2. բնակավայրի հողեր 2712.15 (երկու հազար յոթ հարյուր տասներկու ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) հեկտար, որից տնամերձ՝ 366.34 (երեք հարյուր վաթսունվեց ամբողջ երեսունչորս հարյուրերորդական) հեկտար, հասարակական՝ 128.72 (հարյուր քսանութ ամբողջ յոթանասուներկու հարյուրերորդական) հեկտար, խառը կառուցապատման՝ 15.66 (տասնհինգ ամբողջ վաթսունվեց հարյուրերորդական) հեկտար, ընդհանուր օգտագործման՝ 377.03 (երեք հարյուր յոթանասունյոթ ամբողջ երեք հարյուրերորդական) հեկտար, այլ հողեր՝ 1053.47 (հազար հիսուներեք ամբողջ քառասունյոթ հարյուրերորդական) հեկտար,
3. արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր 366.39 (երեք հարյուր վաթսունվեց ամբողջ երեսունինը հարյուրերորդական) հեկտար,
4. էներգետիկայի, կապի, տրասպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր 423.02 (չորս հարյուր քսաներեք ամբողջ երկու հարյուրերորդական) հեկտար,
5. հատուկ պահպանված տարածքների հողեր 94.11 (իննսունչորս ամբողջ տասնմեկ հարյուրերորդական)հեկտար,
6.հատուկ նշանակության հողեր 256.69 (երկու հարյուր հիսունվեց ամբողջ վաթսունինը հարյուրերորդական)հեկտար,
7. անտառային հողեր 150.84 (հարյուր հիսուն ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) հեկտար,
8. ջրային հողեր 12.72 (տասներկու ամբողջ յոթանասուներկու հարյուրերորդական) հեկտար,

9.քաղաքացիների սեփականության հողեր 402,72 (չորս հարյուր երկու ամբողջ յոթանասուներկու հարյուրերորդական) հեկտար,
10.իրավաբանական անձանց հողեր 68,79 (վաթսունութ ամբողջ յոթանասունինը հարյուրերորդական) հեկտար,

11.համայնքային սեփականության հողեր 3260,31 (երեք հազար երկու հարյուր վաթսուն ամբողջ երեսունմեկ հարյուրերորդական)հեկտար,

12.պետական սեփականության հողեր 687,52 (վեց հարյուր ութսունյոթ ամբողջ հիսուներկու հարյուրերորդական)հեկտար,

13.վարչատարածք՝4429,50 (չորս հազար չորս հարյուր քսանինը ամբողջ հիսուն հարյուրերորդական) հեկտար:

Կողմ (19) **Դեմ(0)** **Ձեռնպահ(0)**

Ա.Ադամյան_____

Գ.Ադամյան _____

Ա.Բաղեյան _____

Ա.Բաղրամյան_____

Լ.Բարսեղյան _____

Մ.Գաբոյան_____

Ա.Գրիգորյան _____

Գ.Թաթարյան _____

Հ.Խաչատրյան _____

Հ.Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ.Հունանյան _____

Ն.Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է.Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

Տ.Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

2013թ. հուլիսի 29
ք.Գյումրի